

ԵՂԵՌՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼԻԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Նեղի Գալստյան

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Գր. Լուսավորիչ 15

Էլ. հասցե՝ hasmikbakurgalstyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 04.10.2021, գրախոսվել է 04.10.2021,

ընդունվել է տպագրության 07.03.2022

DOI:10.53548/0320-8117-2022.1-154

ՀՏԴ: 929:891.981 Բալաքյան + : 929:891.981 Փիլիկյան +947.925 «1915» +32

Ներածություն

1915 թ. Մեծ եղեռնից մազապուրծ հայերի մի մասը, բազմաթիվ փորձությունների ենթարկվելով, հաստատվեց օտար ափերում: XX դարասկզբի ցեղասպանությունը իր ծավալներով գերազանցեց նախորդ բոլոր ջարդերը, որոնց պարբերաբար ենթարկվել էր հայ ժողովուրդը Թուրքիայի վարած քաղաքականության պատճառով: Մեծ տերությունները նյութապես ինչ-որ չափով աջակցեցին հայերին՝ ապրելու վայր ու դրամական օգնություն տրամադրելով, իսկ քաղաքական, գաղափարական ու հոգեկան առումով մնացին քար-անտարբեր: Ահա թե ինչու հայերը, վախը սրտներում, իրենց մեջ կրելով և հոգու խորքում պահելով պատմական այդ դաժան իրողությունը, փորձեցին շրջանցել իրենց հետ պատահածը՝ կամաց-կամաց ընդօրինակելով օտարի վարքուբարքը, սովորույթները, ապրելաձևը, փորձեցին փախչել իրենք իրենցից, իրենց անունից, իրենց տեսակից, մի խոսքով՝ այն ամենից, ինչը կհիշեցնեք XX դարի եղեռնը: Եվ քանի որ նոր միջավայրը թելադրում էր նոր կենսապայմաններ, կյանքի նոր ռիթմ ու որակ, ուստի փրկված հայերից շատերը իրենց երեխաներին փորձեցին զերծ պահել այդ պատմությունից, որպեսզի նրանք հանգիստ ապրեն՝ ամեն փորձությունից ու փորձանքից հեռու: Այնուամենայնիվ, այդ մարդիկ, ապրելու և գոյատևելու ինչ ձև էլ որ ընտրեին, թաքցնեին սեփական էությունը, թե նահանջեին, միևնույն է, եղեռնը իր կնիքը պիտի դնեք ոչ միայն նրանց, այլ նաև հետագա սերունդների ճակատագրի վրա: Փոխանցվելու էր սերնդեսերունդ, արտացոլվելու էր մարդկանց առօրյայում, կենցաղում, մարմնավորում էր ստանալու գրականության մեջ. «Պանդխտությունը մեր ժողովրդի խոր վերքերից է, և պատահական չէ, որ այդ թեման այնքան

շատ է տեղ գտել մեր գրականության մեջ», - գրում է գրականագետ Վազգեն Գաբրիելյանը¹: Հիշատակը՝ հիշողությունը, սրբազան պարտքի գգացողությանը զուգակցված, դառնում է բազմաբնույթ ստեղծագործական նյութ, որը մերթ արտահայտվում է ականատես-վկայի հուշերի ձևով, մերթ մղձավանջին հաղորդակցվելու եղանակով, բայց երկու դեպքում էլ՝ խորապես ապրված ու կենդանի ընկալմամբ: Այդ բանաստեղծության մեջ նկատելի է նաև սփյուռքային լինելու հանգամանքը, որ դրսևորվում է տարբեր միջավայրերի կացութաձևերի հետագծերով: Այս երևույթները լայնորեն արտացոլվել են Փիթեր Բալաքյանի «Լույսի տխուր օրեր» ժողովածուում և Հովհաննես Փիլիկյանի «Համահայկական սիմֆոնիա» պոեմում, որոնք ամբողջությամբ հայի մասին են՝ նրա սփյուռքյան կյանքի ուշագրավ դիտարկումներով:

Փիթեր Բալաքյանի «Լույսի տխուր օրերը» բանաստեղծությունների ժողովածուն

«Ճակատագրի սև շունը» հուշագրության լույսընծայումից մեկ տարի անց՝ 1983 թ., Փիթեր Բալաքյանը հրատարակում է եղեռնի թեմային նվիրված իր երկրորդ ինքնակենսագրական գիրքը՝ «Լույսի տխուր օրերը» (Sad Days of Light) բանաստեղծությունների ժողովածուն, որը հայերեն է հրատարակվել 2010 թ.:

Սփյուռքում ազգային ինքնության դրսևորման հիմնական միջոց եղել է ու մնում է ցեղասպանության հիշողությունը, ուստի պատահական չէ, որ գրողը հաճախ է անդրադառնում եղեռնի թեմային, պատկերում հայի՝ ողբերգական, փորձություններով լի կյանքն ու ողիսական ճանապարհը, նրա վայրիվերումներն ու հոգեկան ապրումները, հույսն ու հավատը վաղվա օրվա հանդեպ: Սիամանթոյի նման լավատես գրողը հավատում է, որ եղեռնի ու տարագրության մահաշունչ ճանապարհներին հայը երբեք չի կորցնում ապրելու հույսը, այն իր կայծերն է շողարձակում ժողովրդին պատուհասած մղձավանջի մոտ՝ ու խավար գիշերներում: Եվ պատահական չէ, որ Բալաքյանն իր այս ժողովածուի համար բնաբան է վերցրել Սիամանթոյի «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքի «Ծարավ» բանաստեղծությունից մի քառատող.

Ու բոլոր մեռածներուն ուրվականներն այս գիշեր,

¹ Գաբրիելյան 1987, 5:

Աչքերուս և հոգիս հետ Արշալույսի պիտի սպասեն..
Որպեսզի, կյանքերնուս ծարավն հագեցնելու համար՝
Թերևս վերեն իրենց վրա կաթիլ մը լո՛ւյս իյնա...²:

Փիթեր Բալաքյանը հաճախ է դիմում անցյալին՝ կարծելով, որ յուրաքանչյուր արվեստագետի խնդիրը պետք է լինի անցյալը ճանաչելը, հիշողության պաշտպանությունը: Անցյալը ամերիկահայ գրողի ստեղծագործության մեջ ներկայանում է որպես կենդանի և գործուն մի ուժ. անցյալի մասին խոհը անհանգիստ ընթացք ունի, քանի որ ներկայի մեջ հարատևում է անցյալի զորությունը: Եղեռնը ծանր հետևանք է թողել սփյուռքահայի հոգում. նա չի կարողանում ձերբազատվել անցյալի դառը հիշողություններից, անգամ խաղաղ, բարեկեցիկ կյանքը մոռացության չի տալիս արյունոտ անցյալը, ամեն քայլափոխի հետապնդում է նրան, տեսիլքի նման հայտնվում («Հայաստանի պատմություն»)³:

Միանգամայն ճիշտ է նկատել հայրենի գրաքննադատ, թարգմանիչ Արտեմ Հարությունյանը. «Բալաքյանի հերոսները ցեղասպանության հետտրավմատիկ տեսիլքների մեջ անընդհատ արյունոտ անցյալի և խաղաղ ներկայի սահմանագծում են: Այդ հոգեբանական ծանր վիճակները նրանց ավերված և ամայացած Հայրենիքի և կործանված կյանքի անտանելի պատկերներն են բերում: Անգամ ամերիկյան քաղաքի՝ Նյու Ջրսիի մթերային խանութ մտնելը արթնացնում է մահվան և ցեղասպանության պատկերներ»⁴:

Գրողը հետևողականորեն պատկերել է իր տոհմի՝ որպես մի ամբողջ ազգի՝ հանձին իր տատի՝ Նաֆինա Չիլինկարյանի (աղջկական ազգանվամբ՝ Շեքերլեմեջյան) ողիսական ուղին, և դա պատահական չէ. ազգային ինքնության մեջ մեծ դեր է խաղում ընդհանուր պատմությունը՝ Ես-ը անջատված չէ Մենք-ից, Ես-ը պայմանավորված է Մենք-ով: «Իր եղեռնապատումը - գրում է Վարդան Փարթամյանը, - նա տալիս է վկայի, ականատեսի մեջ բեկվող հոգեվիճակի անդրադարձումներով: Եղեռնյան օրերի որևէ պահը, իրադարձությունը կամ դրանց կսկծալի հուշն է Բալաքյանի բանաստեղծությունների նյութը, որն ապրումների ու խոհերի անմիջականությամբ ստեղծում է իրավիճակի ճշմարիտ, հոգու մեջ արձագանքվող պատկեր»⁵:

² Սիամանթո 1957, 129:

³ Balakian 1983, 6.

⁴ Բալաքյան 2008, 6:

⁵ Փարթամյան 2005, 108:

Ժողովածուի բանաստեղծությունները մարդկային տառապանքի միմի դիտարկում են կամ բանաստեղծի հոգեկան տվյալտանքը՝ ծնված տանջող մտքերից: Առանձին բանաստեղծություններով Բալաքյանը ցեղասպանությունը վերապրածի, ականատես-վկայի աչքերով պատկերում է եղեռնը («Հայաստանի պատմություն»), գաղթի դաժան ճանապահը («Դիարբեքիր, Թուրքիա, 1914. ինչպես և այն ժամանակ»), անապատի տապը, որն անգամ արևը մայր մտնելուց հետո էլ չի դադարում, սուրսայր կավի պես շարժվում է ոտքերիդ առաջ, սովահար և լլկված մանուկներին, որոնց կոկորդներից լույսի և մեռնող քամու մեջ բլրի վրա արածող ոչխարների նման մայուններ են արձակվում («Ճանապարհի դեպի Հալեպ, 1915»), հայերի հալածանքները, թուրքերի անմարդկային գործողությունները, դաժանությունները («Թուրքական բանտախցում»)⁶:

«Թուրքական բանտախցում» բանաստեղծությունը գրել է ի հիշատակ պապի՝ Տիրան Բալաքյանի և նվիրել է հորը և մորաքույրերին՝ Աննային ու Նոնային: Այս բանաստեղծության նամակագիրներից մեկը Սիամանթոն է, որի «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուն, Փիթեր Բալաքյանի հավաստմամբ, գրվել է Տիրան Բալաքյանի հետ նամակագրության ընթացքում: Գրողը պատկերել է հայերի զգացած անմարդկային սարսափները, վերապրողների հոգեկան խանգարումները («Առաջին հոգեկան խանգարումը, Նյուարք, 1941»), մահվան ճիրաններից հրաշքով փրկվածների տվյալտանքները («Տարագիրների վերադարձը Չմյուռնիա»), որոնք օտար ափերում փրկություն էին որոնում, օտար երկրներից կարեկից վերաբերմունք էին ակնկալում, սակայն արժանանում էին պաշտոնական սառը վերաբերմունքի, անտարբերության, երբեմն էլ՝ արհամարհանքի: Փիթեր Բալաքյանը օտար երկրների այդ սառը վերաբերմունքը քննադատում է «Պահանջը» պոեմով, որը զուտ քնարական ստեղծագործություն չէ, այն առաջին հերթին եղեռնի իրական արտացոլումն է փաստերով ու վավերագրերով:

Պոեմն ունի «Խնդրագիր՝ ի պաշտպանություն օտար կառավարությունների դեմ ուղղված պահանջների» ենթախորագիրը: Պահանջատերը հարազատ տատն է, որի հիշողության առանցքի շուրջն էլ ծավալվում են ու զարգանում պոեմի գործողությունները: Բալաքյանի հերոսը հավաքական

⁶ Balakian 1983, 25.

դիմագիծ ունի. ես-ի մեջ մենք-ն ավելի տարածուն է: Մահ և արհավիրք տեսած, հարազատներին կորցրած, եղեռնից մազապուրծ տատը, որ հրաշքով ողջ մնալով հայտնվել է հեռավոր Ամերիկայում, պետք է լրացնի իր լինելությունը փաստող հարցաթերթիկ՝ անունը, ազգությունը, բնակության վայրը, զբաղմունքը, ունեցվածքը՝ առարկայական ցանկով, ամբողջությամբ կորսված սեփականության նկարագիրը, վնասի նկարագրությունը, արժեքը՝ ամերիկյան դոլարներով, կորուստների ու վնասների հանգամանքների պատճառները և այսպես շարունակ: Հարցեր, որոնք տակնուվրա են անում գաղթականուհու առանց այն էլ բզկտված հոգին, հարցեր, որոնցից յուրաքանչյուրի պատասխանը բացահայտում է դարի ոճագործությունը: Բալաքյանն իր պոեմում քննադատում է քաղաքակիրթ աշխարհը, որը, քաջ տեղյակ լինելով հայերի նկատմամբ կատարված դիվային արաքներին և հայերի զանգվածային տեղահանությանը, հայերից ինքնությունը հաստատող փաստաթուղթ է պահանջում:

Ի պատասխան այն հարցին, թե հայցվորն ինչ փաստեր ունի իր կորուստների կամ վնասների վերաբերյալ, գաղթականուհին ներկայացնում է իր անկեղծ տառապանքից ծնված վկայությունը. «Թուրք ժողովուրդը թալանեց ու յուրացրեց մեր ունեցվածքը, տեղահանող ժանդարմները տղամարդկանց մեկուսացրին մեզնից և զատ-զատ նրանց միմյանց կապելով, տարան, մեզ էլ տարան մի անհայտ ուղղությամբ: Իսկ երեք օր հետո արդեն նրանք մեկ առ մեկ սպանեցին տղամարդկանց ու կանանց, այդ թվում և իմ եղբայրներին ու քույրերին...»⁷: Նվաստացուցիչ փաստաթուղթը վրդովում է հերոսուհուն.

Ես մարդ արարած եմ. . . անհնարին էր, որ ես ինձ հետ ունենայի
 Իմ կորուստների վերաբերյալ փաստագրյալ ապացույց...⁸:

Բալաքյանի հերոսը երբեք չի հուսալքվում, իր արդար պահանջներն է ներկայացնում աշխարհին: Ժողովրդի մեջ անմեռ պահպանվող ազգային ոգին, որ փոխանցվել է հերոսուհուն, ուժ և եռանդ է տվել նրան դիմակայելու ժամանակին, տարածությանը, դժվարություններին: Ոչ ոք նրան չի կարողանում ընկճել: Չնայած բազում դժվարություններին՝ օտարության մեջ հերոսուհին գտել է իր տեղը, նա երբեք չի կորցրել իր ազգային ինքնությունը, ավելին՝ իր հետագա սերունդների մեջ վառ է պահել նախնյաց հի-

⁷ Balakian 1983, 41.

⁸ Balakian 1983, 43.

շատակը, լեզուն և հավատը, սերը դեպի հայրենիքը, նրանց է փոխանցել պատմական անարդարության դառնությունը:

«Գրողը պետք է կարողանա ստեղծել համամարդկային նյութ, - գրում է Փիթեր Բալաքյանը, - որպես պոետ իմ նպատակը եղել է գտնել ասելիքիս տիեզերական խորքը, գտնել ողջ աշխարհին ընդգրկող պոետական ձևը, որը կլինի ոչ թե սոսկ իմը, այլ բոլորինը: Հայոց պատմության այդ կարևորագույն շրջանի մասին իմ զգացողությունները կազմում են պոեմներիս մեծ մասը: Փորձել եմ ցույց տալ Հայոց եղեռնի պատմական ու մշակութային խորությունը, և դա ինձ հաջողվել է»⁹:

Եղեռնը բազմակողմանի դրսևորում է ստանում օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում: Սերնդափոխությունն անգամ հայի հիշողությունից չի կարող ջնջել այն: Հայերիս համար եղեռնը ապրված իրողություն է, արյամբ փոխանցվող ցավ: Եղեռնի թեման չի սպառվում, հայը երբեք չի հաշտվում պատմական անարդարության հետ, այն միշտ թարմ է նրա հիշողության մեջ, չի հաշտվի այնքան ժամանակ, քանի որ ինքնաշարժի արդարամիտ մարդկությունը այն չի դատապարտել: Հայ գրողները՝ օտարագիր թե հայագիր, հարազատ են մնում իրենց ազգային պատմությանն ու կենսական խնդիրներին, ձգտում ողջ աշխարհի մարդկությանը ցույց տալ աշխարհում նմանը չունեցող, բանական մարդու ուղեղում չստեղծվող անհավոր չարիքը:

Հովհաննես Փիլիկյանի «1915-Հայկական մի սիմֆոնիա» պոեմը

Հովհաննես Փիլիկյանն իր օտարագիր հայ գրչակիցների նման ևս անդրադարձել է եղեռնի թեմային: Իր բանաստեղծություններում և «1915-Հայկական մի սիմֆոնիա» պոեմում լայն համադրության մեջ արտացոլել է եղեռնը¹⁰:

«1915 - Հայկական սիմֆոնիան», - պոեմի ներածական խոսքում գրում է գրաքննադատ, հրատարակիչ Քրսիտոֆեր Լոուրենը, - ցույց է տալիս ժամանակը՝ ընկալելով այն որպես ուղղահայաց մի մեծություն՝ երկարաձգվող ու հարաբերական, անցյալն ու ապագան «ժամանակագուրկ» ներկայի մեջ պարփակող: Չպետք է մոռացության մատնվեն անցյալի անարդարությունները, և կարելի է կանխագուշակել, թե ինչ հետևանքների կա-

⁹ Հայոց աշխարհ 2017:

¹⁰ Էմին 1984, 485: Նշենք, որ Հ. Փիլիկյանի ստեղծագործությունների հայերեն մեջբերումները տրվում են Գ. Էմինի թարգմանությամբ:

րող են հանգել դրանք: Ժամանակը հնարավոր չէ անջատել մարդկային գործունեության ամբողջական շարժումից»¹¹:

Հովհաննես Փիլիկյանն իր ստեղծագործություններում խստագույնս դատապարտել է եղեռնը: Գրողը ահասարսուռ պատկերներով փորձել է օտարալեզու հասարակությանը ներկայացնել դարի չարիքը:

Նրա ստեղծագործություններում կրկնվող ու դաժան ճշմարտությունները հերթագայում են՝ ընդգծելով իրողության՝ խելացնորության հասցնող ահավորությունը.

...Պատմական Հայաստանում այլևս հայեր չկա՞ն,
Արդեն «պատմական» Հայաստանում այլևս հայեր չկա՞ն,
Արևմտյան Հայաստանում այլևս հայ չկա՞.
Այլևս չկա՞.
Կա՛ր...

Այլևս հին Հայաստանում հայ չկա՞...¹²:

Փիլիկյանն իր պոեզիայում բժախնդրորեն պատկերել է աշխարհում նմանը չունեցող եղեռնի ահավոր հետևանքները, որոնք դեռ թարմ են ականատես – վկա – վերապրողի զգացական աշխարհում: Գրողը մարդկությանը կանգնեցնում է համընդհանուր հարցադրումների առաջ՝ պատմական փորձի արժևորման, բռնության ու բռնակալության նկատմամբ անզիջում ու անհաշտ պայքարի նկատառումներով: Մարդկության դատին է հանձնում անցյալ ու ներկա իրողությունները, սարսափազդու վտանգով լի իրադարձությունները՝ նրան մղելով մտածելու և գործելու, թույլ տրված սխալն ուղղելու, նորերը կանխելու:

Հայը, որ արմատներով դարերով կպած էր իր երկրին, թուրքի չար ձեռքով և հզոր պետությունների անտարբեր հայացքի ներքո կորցրել է իր երկիրը, դարձել օտարերկրացի¹³:

Նա երբեք չի հուսալքվել, միշտ իր արդար պահանջներն է ներկայացրել աշխարհին. Ժողովրդի մեջ անմահ պահպանվող ոգին մնում է անսասան և անկոտրում: Ուշագրավ է «հայ տղաքի» բանավեճը մեծ մարդու հետ, որը, ինչպես ծանոթագրությամբ է բացահայտվում, «ամերիկյան զինվորական անձնավորություն է (հավանաբար, նույն ինքը՝ պրեզիդենտը՝ որպես ռազմական ուժերի գլխավոր հրամանատար)»: Այդ մեծ մարդու համար չկա պատմության արդար դատ, այլ կան իր բազաները, որոնք

¹¹ Pilikian 1980, 7.

¹² Էմին 1984, 487:

¹³ Էմին 1984, 489:

Թուրքլանդիայի այդ հողերում «պաշտպանում են ազատ քրիստոնեական աշխարհը համայնավարներից՝ անկրոն ու անհավատ ճամփորդներից...»¹⁴: Այս կույր թշնամանքը կոծկում, լուռության է մատնում կորսված հողերի ողբերգությունը, որտեղ այժմ «Մանկական ուրախ աչքերի փոխարեն՝ ռադարների արյունալի հայացքն է»: Բայց և ինչ էլ լինի, ինչպես էլ լինի, հայը չի կարող «պոկվել», «խլվել» իր հողերից:

Մենք սիրում ենք քեզ, հայրենի՛ երկիր.

Քո արգանդում կանգնած է մեր սարն Արարատ¹⁵:

Դա սար չէ միայն, այլ մի ժողովրդի հավերժ գոյության խորհրդանիշ. «Թեկուզև չորս հարյուր տարի, հազար, հարյուր հազար էլ անցնի, – գրում է Փիլիկյանը,– հայը տեղը կլինի իր երկրի և բիբլիական Արարատի...»¹⁶:

Հայոց մեծագույն ողբերգությունը դիտվում և բեկվում է լայն աղերսների մեջ: Բանաստեղծը մեկ առ մեկ ներկայացնում է դարի հրեշներին, նրանց գործած չարիքները: Փիլիկյանը համոզված է. քանի դեռ եղեռնը չի դատապարտվել, նոր հրեշներ են ի հայտ գալու, նոր, ավելի ահավոր չարիքներ են իրագործվելու: Եվ այդ ամենը ...դե՛մ է բնությանը, Աստծուն, Քրիստոսին, մարդո՛ւն...¹⁷:

Քաղաքականապես թրծված բանաստեղծը սթափ հայացքով է ներկայացնում արդի քաղաքական կյանքը, նրա վայրիվերումները, քաղաքական գործիչների անարդար ու կողմնակալ վերաբերմունքը արդարություն տենչող ազգերի նկատմամբ, նրանց շարունակական անտարբերությունը ցեղասպանության, կոտորածների, մարդկային խոշտանգումների հանդեպ:

Եվ թուրքերը կոտորեցի՞ն մեզ,

Հայերի՛ս,

Կոտորեցին քրիստոնյա՛, ստեղծագո՛րծ մի ժողովուրդ,

Մի փոքրաթի՛վ, բայց մեծ ժողովուրդ

Հույների ու հռոմեացիների ավագ եղբո՛րը,

Ասորացիների, հեթիթների և փյունիկեցիների

Հասակակցին...¹⁸:

Գրողը հենց անտարբերությունն է համարում մարդկային չարիքի հիմնական պատճառը, որ նորանոր չարիքներ է ծնում և դեռ ծնելու է¹⁹:

¹⁴ Pilikian 1980, 80.

¹⁵ Pilikian 1980, 25.

¹⁶ Pilikian 1980, 25.

¹⁷ Էմին 1984, 493:

¹⁸ Էմին 1984, 485:

¹⁹ Էմին 1984, 487:

Ինչպես և անհավատալի հեքիաթ են համարում հայերի կոտորածը, ավելին՝ որոշ հզոր պետություններ էլ, որոնք կեղծել և կեղծում են պատմությունը, հայերին են մեղադրում կատարվածում, որն էլ առաջ է բերում գրողի արդար զայրույթը. «Ա՛յ քեզ հիմա՛ր պարոն... ուրեմն հայերն ու հույներն են իրե՞նց կողոպտել կամ սադիստների նման իրենք իրե՞նց են խոշտանգում... Ես ճշմարտությունը կասեմ, եթե դու ինձ նույնիսկ մորթելու լինես... դու մեծ մարդ ես, դու այդ կարող ես անել... բայց այդ դեպքում հայի իմ ամեն մի բջիջը ճշմարտություն կգոռա»²⁰:

Դիպուկ բնութագրումներով պոեմում իրար են հաջորդում նոր օրերի դեմքեր ու իրադարձություններ՝ Ֆեդերիկո Գարսիա Լորկա, նացիստ – ֆաշիստներ, Հիտլեր, Մուսոլինի, Ֆրանկո, Հերոսիմա, ատոմային սպառնալիք:

«Արդի բրիտանական հասարակությունն այնքան ապաքաղաքական է, և Փիլիկյանն իր տեսակի մեջ միակ բանաստեղծն է լինելու, ուզում եմ ասել՝ արիստոֆանյան տիպի այն խիզախը, - գրում է Ք. Լոուրենսը, - որ հիշատակում է անունները և չի էլ ձգտում դրանք քողարկել: Մենք սարսափելիորեն կարիք ունենք իրեն նմանվող ավելի շատ բանաստեղծների, որ պեսզի մեր հասարակության մեջ ստուգենք ազատությունների մետաղը»²¹:

Գրողը դիմելով մարդկությանը՝ խնդրում է խելքի գալ, քանի դեռ աշխարհը հիմնահատակ չի կործանվել:

-Աղաչո՛ւմ եմ ձեզ, մարդի՛կ, արթնացե՛ք,
Արթնացե՛ք, այս փոքրի՛կ հողագնդի սիրույն
Եվ մեր երեխաների՛ սիրույն...²²:

Բանաստեղծը հաճախ է ինքն իրեն հարց տալիս՝ ինչ է պատերազմը, ինչ է խաղաղությունը, և գալիս է հետևյալ եզրահանգումների՝ «Պատերազմը գեղեցիկի նկատմամբ ատելության գերագույն դրսևորումն է»²³, «Խաղաղությունը գեղեցիկի նկատմամբ սիրո բարձրագույն դրսևորումն է»²⁴: Փիլիկյանը միանգամայն ճիշտ է նկատել, որ մարդկության հազարամյա պատմության մեջ պատերազմն ու խաղաղությունը շաղկապված են և փոխնիփոխ լրացնում են մեկմեկու, առաջ մղում կյանքը՝ այն դարձնելով կյանքի և մահվան շարունակական պայքար:

²⁰ Էմին 1984, 491:

²¹ Pilikian 1980, 5.

²² Էմին 1984, 493:

²³ Pilikian 1980, 26.

²⁴ Pilikian 1980, 31.

Եզրակացություններ

Փիթեր Բալաքյանի և Հովհաննես Փիլիկյանի պոեզիայում տիրապետող տրամախոսություններով, արձակ պատումներով, վավերագրերով միաձուլված քնարականությունն է, որը ոչ միայն պարզում է հեղինակային կողմնորոշումը, այլև նրանց զգացմունքային աշխարհը, որտեղ հորձանք են տալիս բողոքը, վիշտը, ցասումը, կարեկցանքը, մանավանդ հեգնանքը, որ խոցում է անայլալ թվացող արտահայտության միջից:

Որտեղ էլ լինեն օտարագիր հայ գրողները, նրանք իրենց ստեղծագործություններով հետամուտ են լինելու ազգային ինքնության, ազգային ոգու պահպանմանը, առանց որի սփյուռքում հայը, որն իր ոտքերի տակ չունի ազգային ենթահող, դարերով մշակված կենցաղ, ազգային միջավայր, ըղձական հայրենիքի տեսիլը, դատապարտված է ձուլման:

Գրականություն

- Գաբրիելյան Վ. 1987, Սփյուռքահայ գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 373 էջ:
Սիամանթո 1957, Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող», 252 էջ:
Բալաքյան Փ. 2008, Լույսի տխուր օրեր, Երևան, ՀԳՄ հրատ., 156 էջ:
Փարթամյան Վ. 2005, Սփյուռքահայ օտարագիր բանաստեղծություն, Երևան, «Մուղնի», 191 էջ:
Հայոց աշխարհ 2017, մարտի 2, հրատ. ԻԱ տարի:
Էմին Գ. 1984, Գիրք թարգմանությանց, Երևան, «Սովետական գրող», 445 էջ:
Balakian P. 1983, Sad Days of Light, New-York, Sheep Meadow Press, 85 p.
Pilikian H. 1980, 1915-An Armenian Simphony And other poems, London, Counter-Point Publications, 171 p.

ԵՂԵՐՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼԻԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Նելլի Գալստյան

Ամփոփում

Եղեռնի թեման առանձնակի տեղ է զբաղեցրել օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում: Սփյուռքում ազգային ինքնության դրսևորման հիմնական միջոցը եղել ու մնում են ցեղասպանության հիշողությունը, ազգային ոգին պահելն ու պահպանելը, ուստի պատահական չէ, որ անգլիագիր գրողներ Փիթեր Բալաքյանը և Հովհաննես Փիլիկյանը իրենց պոեզիայում անդրադարձել են եղեռնի թեմային, պատկերել ողբերգական, փորձություն-

ներով լի հայի կյանքն ու ողիսական ճանապարհը, նրա վայրիվերումներն ու հոգեկան ապրումները, հույսն ու հավատը վաղվա օրվա հանդեպ, նրա անկոտրում ազգային ոգին: Փ. Բալաքյանը «Լույսի տխուր օրեր» բանաստեղծությունների ժողովածուում վերապրածի, ականատես-վկայի աչքերով պատկերել է եղեռնը, գաղթի դաժան ճանապարհը, սովահար և լկված մանուկներին, թուրքերի անմարդկային արաքները, դաժանությունները, հայ ժողովրդի կրած տառապանքները, բայց նաև ազգային անկոտրում ոգին, աշխարհին ուղղված արդար պահանջը: Հովհաննես Փիլիկյանը իր «1915 - Հայկական սիմֆոնիան» պոեմում ոչ միայն պատկերել է եղեռնը, քննադատել այն, այլև սթափ հայացքով ներկայացրել է արդի քաղաքական կյանքը, դրա վայրիվերումները, քաղաքական գործիչների անարդար ու կողմնակալ վերաբերմունքը արդարություն տենչող ազգերի նկատմամբ, նրանց շարունակական անտարբերությունը ցեղասպանության, կոտորածների, մարդկային խոշտանգումների հանդեպ:

Բանալի բառեր՝ հիշողություն, ազգային առանձնահատկություն, ազգային ինքնություն, սիյուրքահայ կյանք, դեպքերի ականատես-վկաներ, պատմական անարդարություն, պատմական իրողություն:

ТЕМА ГЕНОЦИДА И НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ПОЭЗИИ ПИТЕРА БАЛАКЯНА И ОВАНЕСА ПИЛИКЯНА

Нелли Галстян

Резюме

Тема Геноцида занимает особое место в творчестве зарубежных армянских писателей. Память о Геноциде была и остается главным средством выражения национальной идентичности в диаспоре, потрясений и душевных переживаний, надежды и веры в будущее, несокрушимого национального духа. В сборнике стихов «Печальные дни света» П. Балакян обращается к теме Геноцида и депортации армян, бесчеловечных действий турок, направленных на истребление армянского народа.

Тема геноцида легла и в основу поэмы Ованеса Пиликяна «1915-Армянская симфония», в которой автор критикует предвзятое отношение политиков к нациям, борющимся за справедливость.

Ключевые слова – память, национальная специфика, национальная идентичность, жизнь армянской диаспоры, свидетели-очевидцы событий, историческая несправедливость, историческая действительность.

THEME OF GENOCIDE AND NATIONAL IDENTITY IN POETRY OF PETER BALAKYAN AND HOVHANNES PILIKYAN

Nelly Galstyan

Abstract

The theme of the Genocide has a special place in the works of foreign Armenian writers. The memory of the Genocide has been and remains the main means of expressing national identity in the Diaspora, the upheavals and mental feelings, the hope and faith in the future, its unbreakable national spirit. In the collection of poems "Sad Days of Light" P. Balakyan portrayed the Genocide, the cruel way of migration, the starving children, the persecution of Armenians, the inhuman acts of the Turks, the cruelty, the immortal spirit of the Armenian people. In his poem "1915-Armenian Symphony" H. Pilikyan not only portrayed the Genocide, criticized it, but also soberly presented the modern political life, its collapse, the unjust and biased attitude of politicians towards nations seeking justice, their continuous indifference to genocide, massacres, human to torture.

Key words – memory, national identity, the life of the Armenian diaspora, witnesses of events, historical injustice, historical reality.